

ԵՐԱԿՐՈՆԵԱՆ

ՄԱՅՐ ԱՅԹՈՒՆՈՒՄ

ՄԱՅՐ ԱՅԹՈՒՆՈՒՄ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԿԱՌԻԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԸ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ազգային բարերար, մյուռնոսփինների կնքահայր տիար Սամվել Կարապետյանին

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոկտեմբերի 2-ին ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ազգային բարերար, մյուռնոսփինների կնքահայր տիար Սամվել Կարապետյանին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձավ ազգային մեծ բարերարի հայրենամարտի ու եկեղեցական գործունեությանը, որ նախանձախնդրությամբ մշտապես նաև իր գորակցությունն է բերել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինությանն ու պայծառությանը:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց տիար Սամվել Կարապետյանի եկեղեցական և մյուռնոսփինների կնքահայրությունն ստանձնելու հանձնարարությունը և իբրև նվիրական այդ արարողության հիշատակ՝ նրան ընծայեց 2024 թ. մյուռնոսփինության սափորի նմուշը, որով Սուրբ Էջմիածնում օրհնված մյուռնը Նվիրապետական Աթոռների գահակալների, թեմակալ առաջնորդների միջոցով բաշխվում է աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

Վերջում Հայոց Հովվապետը մաղթեց, որ Աստծո ամենառատ օրհնություններն ու Սուրբ Հոգու շնորհները մշտապես ուղեկցեն ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանին և նրա բարեպաշտ ընտանիքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմ

Նոյեմբերի 6-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմ:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդիպումներ կունենա թեմական խորհրդի և ազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կմասնակցի Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) 93-րդ համաժողովին:

Պատրիարքը հանդիպումներ կունենա թեմական խորհրդի և ազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կմասնակցի Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) 93-րդ համաժողովին:

Մայր Աթոռում սուրբ պատարագից հետո ուխտավորներին բաշխվեցին մատաղ և օրհնված ջուր

Նոյեմբերի 6-ին Սիածնաեջ Մայր տաճարում Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ մատուցվեց սուրբ և ամենաի պատարագ: Պատարագից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Ս. Արշակ արք. խաչատրյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հայ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ և ուխտավոր բազմաթիվ հայորդիներ:

Իր քարոզում Արշակ արք. բարձր գնահատեց Սուրբ Էջմիածնի օրվա ավետարանական ընթացվածքին, որտեղ Հիսուս արձագանքում է իր ունեցած իշխանության վերաբերյալ իրեն պաշտոնյաների հարցադրումներին՝ ընդգծելով, որ Քրիստոս իր քարոզությամբ, իր հրաշագործություններով և իր անբիծ կյանքով ու վարքով փաստեց, որ բացարձակ ու անբեկարկելի իշխանությունը պատկանում է միայն ու միայն Աստծուն, և Աստված է մարդկանց շնորհում իշխանություն երկրի վրա:

«Հիսուս բացարձակապես հեռու է երկնավոր և երկրավոր իշխանությունների նույնականացումից: Երկրավոր թագավորն ու իշխանը երբեք ու երբեք չեն կարող հավակնել երկնավոր Թագավորի փառքին ու հեղինակությանը: Երկրավոր թագավորի ու իշխանի հեղինակության աղբյուրը երկնավոր Թագավորն է՝ նույն Ինքը՝ Աստված: Եվ դրա համար Հիսուս ասում է. «Տվե՛ք Աստծուն Աստծուն և կայսրին՝ կայսեր» (Մատթ. 22:21): Այո, քրիստոնեությունը քարոզում է հնազանդություն իշխանություններին, հնազանդություն, որ բխում է կամավոր ընտրությունից ու Աստծո պատվիրանների համդեպ խոր պատասխանատվությունից: Իշխանությունների համդեպ հնազանդությունը, սակայն, երբեք ու երբեք չի կարող հանգեցնել աստվածներության ու հավատալիության: Հիսուս նվիրագործում է մարդկային իշխանությունը՝ որպես երկրի վրա արդարադատության իրականացման, մարդկանց միջև համերաշխության ձևավորման և բարիքի կերտման գործիք: Նույն Պողոս առաքյալը վճռականորեն հայտարարում է, որ իշխանությունը տրված է մարդկանց «գոտեպնդելու և ոչ թե կործանելու համար» (Բ Կորնթ. 10:8):

Հետևաբար այն իշխանությունը, որն իր գործողություններով կամ անգործությամբ հանգեցնում է կործանման ու ավերածությունների, խեղաթյուրում է արդարադատությունը և հրահրում հակառակուսի:

թյուններ ու խաթարում մարդկանց խաղաղ համակեցությունը, այդ իշխանությունը կորցնում է կայուն իշխանություն շնորհող Աղբյուրի՝ Աստծո հետ, ուստիև զրկված է հեղինակությունից ու արժանավատալիությունից»,- մշեց Արշակ արք. խաչատրյանը, որ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով և Սիածնի Որդու էջքով հաստատված ու կառուցված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարով խորհրդանշվող Առաքելական Սուրբ Եկեղեցին

վում են եկեղեցու անդամությունից, նրանց բաժինն ուրացողների և դավաճանների հետ է: Մենք պատմական ժողովուրդ ենք՝ պատմական առաքելությամբ և պատմական այդ առաքելությունն իրականացնելու բացառիկ պատասխանատվությամբ: Մենք ներում չենք ստանալու ոչ Աստծուց, ոչ մեր նախնիներից և ոչ էլ ապագա սերունդներից, եթե ձախողենք մեր պատմական առաքելությունը: Այս սուրբ տաճարի վերածումը մեր հույս ու



նույնպես օժտված է իշխանությամբ. իշխանություն, որ տրված է հենց նույն Աստծուց՝ բացարձակ և անքննելի իշխանության Աղբյուրից, հոգ տանելու Տիրոջ բանավոր հոտի հոգիների փրկության ու անվտանգության համար:

«Մենք զավակներ ենք այս Սուրբ Եկեղեցու: Լինել զավակ նշանակում է ճանաչել Եկեղեցու իշխանությունը և հնազանդվել: Փորձել ներկայանալ Եկեղեցու հետևորդ, բայց ունկնդիր չլինել Եկեղեցու ձայնին նշանակում է կամավորաբար հրաժարվել Եկեղեցու անդամությունից: Եկեղեցու խոսքն ուղղված է իր զավակներին: Նրանք, ովքեր կամավորաբար հրաժար-

մոր լույս է բերում մեր կյանքին, մեր հորիզոններ բացում մշուշոտ պայծառների մեջ»,- ընդգծեց Մայր Աթոռի դիվանապետը՝ մաղթելով, որ Աստված իմաստությամբ շնորհագրողի մեր Սուրբ Եկեղեցու զավակներին՝ արիությամբ հաղթահարելու ժամանակի հարուցած մարտահրավերները և անվրդով խաղաղության մեջ պահի հայրենիքը, անվտանգ ու բարօր կյանքի մեջ՝ հայ ժողովրդին:

Սուրբ պատարագի ավարտին, Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ, Մայր տաճարի վերածանալ առթիվ օրհնվեցին և ուխտավոր հայորդիներին բաշխվեցին մատաղ և օրհնված ջուր:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց Հայկական բարեգործական ընդհանուր միության 93-րդ համագումարին

Նոյեմբերի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարքը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նյու Յորքում մասնակցեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) 93-րդ համագումարին, որի ընթացքում իր հայրական պատգամը փոխանցեց մասնակիցներին:

Նորին Սրբությունը իր օրհնությունը ու բարձր գնահատանքը բերեց տիար Պերճ Սեդրակյանին, որը տքնաջան աշխատանքով, ազգամիջոցով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ սիրով ու հավատարմությամբ քսաներկու տարի մախանձախնդրորեն գործել է իբրև ՀԲԸՄ-ի մախագահ, իսկ այսուհետ իբրև պատվով մախագահ պետք է շարունակի իր միջոցով ծառայությունը միությանն ու հայ ժողովրդին:

Հայոց Հայրապետն առանձնակի գոհունակությամբ ընդգծեց նաև ՀԲԸՄ-ի հոգաբարձուների խորհրդի ատենապետ տիար Վաչե Մանուկյանի ազգագույն և եկեղեցաշահ բազում իրագործումներն ու մեծ վաստակը և հմուտ առաջնորդությունն ի նպաստ Բարեգործականի առաքելության արգասավորման:



ՀԲԸՄ-ի մախագահությունն ստանձնելու առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շնորհավորանքներն ու օրհնությունը բերեց տիար Սեմ Սիմոնյանին: Անդրադառնալով նոր սերնդի կրթության և տեխնոլոգիական ոլորտի զարգացման գործում տիար Սիմոնյանի նշանակալի ավանդին՝ Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ վերջինս

նույն մախանձախնդրությամբ ու մեծ փորձառությամբ կղեկավարի Հայկական բարեգործական ընդհանուր միությունը՝ հավատարիմ Բարեգործականի ավանդներին, նոր ձեռքբերումներով կպայծառացնի միջազգային հաստատության դարավոր բարի համբավն ու հեղինակությունը:

Իր խոսքում Հայոց Հովվապետը, անդրադառնալով ՀԲԸՄ-ի հայրենաշեն և եկեղեցամբար գործունեությանը, ի մասնավորի մշեց. «Քոլոր ժամանակներում՝ հատկապես մեր ժողովրդի համար ծանր և փոթորկալի իրավիճակներում, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, համաձայն միության հիմնադիրների տեսլիքի, իր կարելիություններն ի սպաս է դրել ազգիս կարիքավոր զավակների հոգաժողության ու խնամքի համար: Միությունը, հայության ու հայրենյաց կյանքի անհրաժեշտություններին լիարժեք պատասխանելու համար, կրթական, մշակութային, առողջապահական ոլորտների զարգացմանը, Սփյուռք-Հայաստան կապերի սերտացմանը և մեր ժողովրդի ինքնության պահպանմանը»:

Ամենայն Հայոց Հայրապետն ընդգծեց,

«Վերջին շրջանի աղետալի իրադարձությունների պայմաններում միությունը կարևոր աջակցություն է ցուցաբերել Արցախից բռնի տեղահանված հայորդիներին: Գնահատանքով ենք արձանագրում, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բազում մախանձախնդրություններ ևս իրականացվում են Հայկական բարեգործական ընդհանուր միության աջակցությամբ, նրա անդամների սիրահոգությամբ համընդունված շնորհիվ»,- մշեց Նորին Սրբությունը՝ հավելելով, որ միության սատարմամբ Հայաստանում գործող հայորդյաց տներում հազարավոր երեխաներ բացահայտվում են իրենց ունակություններն ու շնորհները, կրթվում և դաստիարակվում ազգասեր ու հայրենամարտի ոգով:

Նորին Սրբությունը մտահոգությամբ անդրադարձավ նաև հայ ժողովրդի առջև ծառացած անվտանգային մարտահրավերներին. «Նման կացության մեջ մտահոգիչ են ազգային կյանքում տիրող անհամերաշխությունն ու պառակտվածությունը, որոնք խոչընդոտ են հանդիսանում ի նպաստ հայրենիքի համագլխային ներուժի համախմբման, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների բնականոն զարգացման, առկա լրջագույն հիմնախնդիրների դիմագրավման և ազգային ինքնության պահպանման համար, առաջնահերթություններ, որ մշտապես եղել են Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեության առանցքում»:

Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը պիտի շարունակի ջանքեր գործադրել առկա մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ՝ օգտակար ծառայություններ մատուցելով աշխարհասփյուռ մեր ժողովրդին ու հայրենիքին:

Վերջում Հայոց Հովվապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց միության հոգաբարձուների խորհրդի և կենտրոնական վարչության անդամներին, համաժողովի մասնակիցներին ու ներկաներին՝ մաղթելով Բարձրալի զորակցությունը Հայկական բարեգործական ընդհանուր միությանն իր պատվական առաքելության և օրհնյալ ծառայության ճանապարհին:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի նամակը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշին

Հարգելի Անտոնիո Գուտերեշ,

2024 թ. նոյեմբերի 11-22-ը Բաքվում մատակցվում է անցկացնել ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի մասնակիցների կոնֆերանսի 29-րդ նստաշրջանը (COP29), որին մասնակցելու իրավունք ունենում են բոլոր երկրները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների պատասխանատուներին:

Ուղիղ մեկ տարի առաջ՝ այս օրերին, Ադրբեջանի զինված ուժերը անկանոն գնդակոծության են ենթարկել խաղաղ բնակավայրերը և ներխուժել Լեռնային Ղարաբաղ/Արցախ: Մի քանի օրվա ընթացքում 120 հազար արցախցի ֆիզիկական բնաջնջման իրական սպառնալիքի տակ ստիպված եղավ լքել Արցախը: Մարդիկ, որոնց մախանձախնդրությամբ շարունակապես ապրել են Արցախում, պարտադրվեցին թողնել իրենց տները, գերեզմանները, մախանձախնդրող կտակված պատմամշակութային ժառանգությունը: Հիշեցնենք, որ մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմը Արցախի բնակչությունը կազմում էր 151 հազար մարդ:

Առկա փաստերն առավել քան բավարար են հաստատելու, որ Արցախի ժողովրդի հետ կատարվածը հանցագործություն է մարդկության դեմ: Տակավին վերջերս Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան իր հայտարարության մեջ նշել է, որ այդ իրադարձությունները համապատասխանում են Ցեղասպանության կոնվենցիայով սահմանված ցեղասպանության հատկանիշներին:

Ցավոք, արցախահայության ողբերգությունը գործնականում աննկատ է մնացել համաշխարհային հանրության կողմից: Բացառությամբ միջազգային որոշ կազմա-

կերպությունների և քաղաքական առանձին առաջնորդների հայտարարությունների՝ որևէ քայլ չի ձեռնարկվել դադարեցնելու Ադրբեջանի ցեղասպան քաղաքականությունը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղ/Արցախը հայաթափելու, էթնիկ զտում իրականացնելու և նրա ժողովրդի ինքնորոշման արդար ցանկությունը ճնշելու համար:

Ավելին, մենք ակնհայտես եղանք, թե ինչպես է անպատեժիության զգացումը սնուցել Ադրբեջանի ծավալապաշտությունը, և այսօր Ադրբեջանն արդեն իսկ օկուպացրել է ՀՀ ինքնիշխան տարածքները և քայլեր է ձեռնարկում սահմանափակելու նրա ինքնիշխանությունը ու անկախությունը:

Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի հավատացյալ զավակների հիմնական մասն այսօր ապաստան է գտել Հայաստանի Հանրապետությունում, իսկ նրանց մի ստվար զանգված՝ աշխարհի տարբեր երկրներում: Ու թեև այսօր նրանք ազատված են ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից, սակայն ամեն օր շարունակում են բախվել իրենց իրավունքների ու ազատությունների բազմաթիվ խախտումների հետ:

Արցախից բռնի տեղահանված հազարավոր մարդկանց համար ամենակարևոր խնդիրը մնում է հայրենիք վերադառնալու հարցը: Վերադարձի իրավունքը, որն ամրագրված էր նաև Արդարադատության միջազգային դատարանի կողմից ընդունված ժամանակավոր միջոցների մասին որոշման մեջ, շարունակում է անտեսվել միջազգային հանրության կողմից: Թեև տարբեր կառույցներ ու առանձին պետություններ երբեմն հայտարարություններ են անում Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի մասին, սակայն այս հարցի շուրջ եական առաջընթաց չկա:



Վստահ ենք, որ առանց արցախահայության՝ հայրենիք վերադառնալու միջազգային անվտանգության երաշխիքների, անհնար են հակամարտության վերջնական կարգավորումը և խաղաղության ու կայունության հաստատումը ողջ տարածաշրջանում:

Միևնույն ժամանակ Ադրբեջանը շարունակում է վերանայել և կեղծել պատմությունը, ոչնչացնել և յուրացնել հայկական մշակութային ժառանգությունն ու նյութական արժեքները՝ ջնջելու հայկական ներկայության ցանկացած հետք և կանխելու հայերի վերադարձը Լեռնային Ղարաբաղ: Ավերվել են մի շարք եկեղեցիներ և գերեզմանատներ, այդ թվում՝ Շուշիի Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին: Քարին տակ գյուղը հիմնովին ավերվել է, մի շարք այլ բնակավայրերի էլ անուղղելի վնաս է հասցվել: Թեև իրավապաշտպան և մասնագիտական կազմակերպությունները գրեթե ամեն օր արձանագրում են նման բազմաթիվ օրինակներ, Ադրբեջանը որևէ պատասխանատվություն չի կրում, ինչը կանաչ լույս է վառում հետագա հանցագործությունների համար:

Ադրբեջանը շարունակում է Բաքվի բանտերում պահել հայ ռազմագերիներին ու պա-

տանդներին: Ադրբեջանական բանտերում հայ բանտարկյալների նկատմամբ խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի բազմաթիվ արձանագրված փաստեր կան, սակայն Ադրբեջանը նույնիսկ թույլ չի տալիս միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին իրական տեղեկատվություն ստանալ այդ մարդկանց առողջական վիճակի մասին: Ավելին, այս հարցը Ադրբեջանի կողմից օգտագործվում է որպես քաղաքական սակարկությունների թեմա, ինչը կոպտորեն խախտում է միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները:

Ձերդ Գերազանցություն, Պետք է օգտագործվեն COP29-ի ընթացքում ընձեռված բոլոր հնարավորությունները՝ տարածաշրջանում արդար, երկարատև և արժանապատիվ խաղաղություն հաստատելու համար: Լեռնային Ղարաբաղ/Արցախի հայության իրավունքների պաշտպանությունը և տարածաշրջանային անվտանգության խթանումը կարևոր նշանակություն ունեն ժողովրդավարական իդեալներին մեր սեփական հավատարմությունը պահպանելու համար:

Այս կապակցությամբ, կոչ եմ անում ճնշում գործադրել Ադրբեջանի մախագահ Իլիամ Ալիևի և Ադրբեջանի կառավարության վրա՝ շրջափելի միջոցներ ձեռնարկելու, որոնք կաջակցեն տարածաշրջանային խաղաղությանը, կապահովեն մարդու իրավունքների պաշտպանությունը և կպահպանեն միջազգային օրենքների ու նորմերի գերակայությունը:

Աղոթքով՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տեմ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան

Թարգմանչաց տուն

Նայոց եկեղեցին թարգմանչ վարդապետների տունը տարվա մեջ երկու անգամ է հիշատակում: Առաջինը կոչվում է «Սրբոց թարգմանչաց հարցն մերոց Սահակայ և Մեսրոպայ» և տոնվում է Հոգեգալստից երեսուներեք օր հետո, իսկ երկրորդը կոչվում է «Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշեի, Մովսիսի Քերթովհին, Դավթի Անհաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացուն և Ներսիսի Կլայեցուն» և տոնախմբվում է հաջվերացից հետո՝ հինգերորդ կիրակիի մախորդ օրը՝ շաբաթ:

Ինչպես հայտնի է, Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո Հայոց եկեղեցին դեռևս չէր հայկականացել, քանի որ չունեի սեփական գիրը: Վանքերում և եկեղեցիներում ծիսական արարողություններ էին կատարվում, որոնց ժամանակ Աստվածաշունչ էր ընթերցվում հունարեն կամ ասորերեն, ինչը հայ հավատացյալի համար անհասկանալի էր: Երբեմն բերանացի թարգմանում էին, սակայն սեփական գրի բացակայությունը մեծ խոչընդոտ էր, և այս ամենը քաջ գիտակցում էին և՛ արքունիքում, և՛ հոգևոր շրջանակում:

Սեփական գրի անհրաժեշտությունը, հիրավի, օրհասական խնդիր էր, առանց որի չգոյություն կդատապարտվեր մեր ազգային ինքնությունը, և Մաշտոցյան հայոց գրերը Աստծո պարզևն են մեր ժողովրդին: Բազմաթիվ փորձերից հետո «Մեսրոպի ցանկությունն առաքել գտնվեց, քան մարդուն իմացականությունը, մա իր մեջ ամփոփվեց և ապավինեց Աստծուն պահքով ու աղոթքներով: Եվ Աստված, որ կատարում է իրենից երկյուղ կրողների կամքը, լսեց Մեսրոպի աղոթքները և ցույց տվեց գրերը սքանչելի տեսիլքով և ոչ թե երազի մեջ քնած ժամանակ, այլ արթուն աչքով իմանալի և աչքի տեսանելիքով զգալի: Մեսրոպը տեսնում էր,




«Թարգմանչաց Ավետարան», 1232 թ., ընդօրինակման վայրը նշված չէ, գրչագրել է Տիրացուն, ծաղկել՝ Գրիգորը

որ աչ ձեռքի դաստակով գրում է վեմի վրա, որ դրված էր նրա առջև: Եվ գրերի փորվածքն այնպիսին էր, ինչպիսին ձեռքն էր ձև տալիս վեմի վրա. և գրերի տարբերություններն ու ամունները ձևավորվում էին Մեսրոպի մտքում», — կարդում ենք «Հայսմավուրք»-ում:

Հայոց աստվածապարզ գրերի գյուտից հետո, ինչպես հայտնի է, Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը բացեցին դպրոցներ և իրենց շուրջ համախմբեցին կարող ու նվիրյալ անձանց՝ նրանց լծելով մեծ առաքելության: Աշակերտները եղան իրենց ուսուցիչների հավատարիմ և արժանավոր հետևորդներն ու նրանց սրբազան առաքելության շարունակողները՝ օժտված բարձր գիտակցությամբ ու աներեր հավատքով:

Զմռանանք՝ Հայոց եկեղեցին այն եզակի եկեղեցիներից է, որ թարգմանիչներին նվիրված հատուկ տոն ունի, քանի որ թարգմանությունը դիտվում էր մեկնության տեսակ և ուղղորդի պարզ փոխադրություն չէր մեկ բառից մյուսի, այլ հատկապես հայ հավատացյալի համար Աստվածաշունչ մատյա-



«Հովսեփ Ավետարան», 1669 թ., Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանք, գրիչ՝ Բարսեղ

նը հարազատացնելու, ընկալելի դարձնելու ընթացք էր: Սուրբ Թարգմանիչները առաքյալներ եղան մեզ համար, որոնց կատարած մեծ գործի արդյունքում Աստված հայերեն խոսեց հայ հավատացյալի հետ, և մեր ինքնությունը փրկվեց ծովման վտանգից:

Թարգմանչաց տունը հայ ժողովրդի համար դարձել է մեծագույն տոն, քանի որ Հայ եկեղեցին նրա մեջ խտացրել է ոչ միայն կրոնաեկեղեցական, այլև ազգային մեծ նշանակություն ու արժեք: Արդարև, 5-րդ դարում Սուրբ Սահակ Պարթև հայրապետն ու Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը միասնաբար կրոնական, ազգային և մշակութային անմխաղեպ առաքելություն ծրագրեցին, կազմակերպեցին և իրականացրին, և այդ ամենի շնորհիվ մեկ դար առաջ պետական կրոն հռչակված քրիստոնեությունը պատմական կարճ ժամանակահատվածում վերածվեց նաև տիրապետող համազգային կրոնի, իսկ Հայ եկեղեցին դարձավ համազգային շահերի արտահայտիչն ու պաշտպանը, ինչի հետևանքով հանուն քրիստոնեա-

կան եկեղեցու և հավատի մղվող պայքարն այդ ժամանակ նույնացվեց հանուն ազգային, պետական ու քաղաքական անկախության մղվող պայքարի: Ինչպես նաև գրերի գյուտը պետք է հիմք ծառայեր ազգային մշակույթի զարգացմանն ու ազգային գիտակցության և ինքնագիտակցության վերելքին:

Թարգմանչաց տունին հիշատակվում է վեց թարգմանիչ, որոնցից չորսը՝ Մեսրոպ Մաշտոցը, Եղիշեն, Մովսես Քերթովհն ու Դավիթ Անհաղթը, գործել են 5-րդ դարում, Գրիգոր Նարեկացին՝ 10-րդ դարում, իսկ Ներսես Շնորհալին (նույնը՝ Կլայեցին)՝ 12-րդ դարում: Սա ցույց է տալիս, որ Թարգմանչաց շարժումը շարունակվել է նաև հետագա դարերում՝ չափանափակվելով Ոսկեդարով:

Ամեն տարի՝ Թարգմանչաց տունին, հավատացյալները ուխտավորաբար մեկնում են Օշական գյուղի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, որտեղ ամփոփված է Սուրբ Մեսրոպի մարմինը: Այդ օրը եկեղեցուն պատարագ է մատուցվում, որի ընթացքում, սկսած 2008 թվականից, եկեղեցի է բերվում «Հովսեփ Ավե-

տարանը», որպեսզի հավատացյալները հաղորդվեն Ավետարանի հրաշագործ գործությամբ: Ավետարանը գրվել է 17-րդ դարում Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքում: Հետագայում Ավետարանը եղել է Հուլիան գերդաստանի սեփականությունը, որ նվիրել են Աշտարակի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցուն: Ավետարանը պահվել է մաս Կարմրավոր Սուրբ Աստվածածին եկեղեցում, իսկ 1931 թվականից՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանում:

Մաշտոցյան Մատենադարանում 2743 համարի ներքո պահվում է մագաղաթյա նկարազարդ մի ձեռագիր, որը հայտնի է «Թարգմանչաց Ավետարան» անունով: Գրվել է 13-րդ դարում, ընօրինակման վայրը հայտնի չէ: 14-րդ դարի սկզբին պատկանել է Վերին հաչենի իշխան Գրիգոր Դոփյանին ու նրա կնոջը՝ Սյունյաց Տարսայի՝ իշխանի դուստր Ասփային, որը ձեռագիրը նվիրել է հաղավանքին: Ձեռագիրն ունեցել է ոսկե կազմ, որի համար էլ ստացել է «Ոսկե գիրք» անվանումը, սակայն ոսկե կազմը չի պահպանվել:

Արդեն 1900-ական թթ. ձեռագիրը գտնվել է Ուտիքի Գարդմանք գավառի Թարգմանչաց վանքում. այստեղից է մատյանն ստացել իր վերջին անվանումը՝ «Թարգմանչաց Ավետարան»: Թարգմանչաց վանքի կառուցումը կապվել է Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան հետ. կան զրույցներ այն մասին, որ վանքը կառուցել է մա՝ Հայոց աշխարհում քրիստոնեության տարածման և ամրագրման նպատակով: 1916 թ. Գարեգին վարդապետ Յովսեփյանը այն բերել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, իսկ այժմ պահվում է Մաշտոցյան Մատենադարանում: Գունագեղության կատարելությամբ և կերպարների արտահայտչականությամբ «Թարգմանչաց Ավետարանը» հայկական մանրանկարչության ամենամանրամասն ձեռագրերից է:

Մարիան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայոց եկեղեցու դերը 16–17-րդ դարերի հայ ազատագրական պայքարի նախապատրաստման գործում

Համազգային հայ կրթական և մշակութային միության Երևանի գրասենյակի նախաձեռնությամբ և ԵՊՀ պատմության ու աստվածաբանության ֆակուլտետների հետ համագործակցությամբ ս. թ սեպտեմբերի 10-ին կայացավ «Հայոց եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում» խորագրով համահայկական գիտաժողով, որին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մասնակցեցին նաև Տ. Արարատ քին. Պողոսյանը և Նարեկ սրկ. Գասպարյանը: Ստորև ներկայացնում ենք Տ. Արարատ քին. Պողոսյանի զեկույցը գիտաժողովին:

Ունե ժողովրդի ազատագրական պայքարի հաջողության համար հույժ կարևոր է տվյալ ժամանակի ներքին և արտաքին նախադրյալների առկայությունը: Որո՞նք էին ներազգային կյանքի նպաստավոր նախահանգամանքներն ու նախապայմանները, որոնք, մեր համոզմամբ, կարևոր էին 16–17-րդ դարերի հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարական ու գործնական հարթություններում որոշակի նվաճումներ արձանագրելու համար:

Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում հաճախ, գրեթե մշտապես պարտադրված է եղել պայքարել ազատագրության և անկախության համար: Ազգային-ազատագրական պայքարում վճռորոշ դերակատարում է ունեցել Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին, որ քրիստոնեության ընդունումից հետո շարունակ եղել է Հայոց անկախ պետության պահպանման կամ վերակերտման դիրքում:

Հայոց եկեղեցու դերը մեծապես կարևորվել է մամալանո այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը զրկված է եղել պետականությունից, քանի որ եկեղեցին ձգտում էր լրացնել պետությանը ներհատուկ գործառնությունների բացը, որոնք հնարավոր էր զուգահեռել իր ամենօրյա հոգեփրկչական առաքելությանը: Պետության չգոյության ժամանակ, հատկապես գաղթօջախներում, նույնիսկ գավաթ են բարձրացրել կաթողիկոսի համար այն դեպքում, երբ պետության գոյության պայմաններում գավաթ էին բարձրացնում միայն թագավորի համար: Այս տեսանկյունից կարևորում ենք 16–17-րդ դարերի հայ ազատագրական պայքարի վերագնահատումն ու վերաբնակումը, դարաշրջան, երբ Հայ եկեղեցին նախաձեռնել ու առաջնորդել է հայ ազատագրական պայքարը թե՛ գաղափարապես և թե՛ գործնականորեն:

Հայ ազատագրական պայքարը և հայկական գաղթավայրերը: Գաղ-

թաշխարհի հայության մասնակցությունն ազատագրական պայքարին դրսևորվել է երեք եղանակով.

Առաջին՝ խանդավառված հայրենիքի ազատագրության գաղափարով՝ Հայաստան գալ և ամրաշահվել մասնակցություն ունենալ մղվող պայքարին: 17-րդ դարի կեսերից սկսում են Հայաստան գալ և Ս. Էջմիածնի, Գանձասարի և հայոց եկեղեցական տարբեր կենտրոնների՝ հատկապես Մշո Ս. Կարապետ վանքի առաջնորդների հետ հանդիպումներ ունենալ հայ ազատագրական պայքարի ծրագրեր նախաձեռնողները: Նրանք գրեթե բոլորն էլ եղել են Ս. Էջմիածնում՝ քաջ գիտակցելով, որ կազմակերպչական ուժով և համազգային հեղինակությամբ նվիրապետական որևէ այլ աթոռ ի գործու չէ առավել գործուն մասնակցություն ցուցաբերելու համահայկական նշանակություն և ընդգրկում ունեցող հարցերին: Այստեղ, սակայն, առկա էր մի էական հանգամանք, որը կաշկանդում էր Ս. Էջմիածնի գաղափարին: Հայոց եկեղեցին ազգային հոգևոր կառույց էր, և համահայկական այդ կենտրոնին սպառնացող որևէ վտանգ հարված կլիներ նաև ողջ հայության կազմակերպչական հնարավորություններին ու համախմբմանը: Այդ պատճառով Ս. Էջմիածնի գաղափարներն առա-

վել կաշկանդված և զգուշավոր էին գործում, քան Գանձասարի կաթողիկոսները, որոնց վրա պատասխանատվության այդպիսի բեռ ծանրացած չէր:

Երկրորդ՝ հայ գաղթավայրերը նյութական աջակցություն են ցուցաբերում ընթացող կամ ծրագրվող պայքարին, մասնավորապես գաղափարներ են տարածում հայ իրականության մեջ՝ գրատպությամբ և հրատարակությունները հայրենիք ուղարկելով, կամ աջակցում են Եվրոպա մեկնած ուսանողներին, որոնք, տոգորվելով ազատագրական գաղափարներով, դրանք հետագայում տարածում էին հայրենի երկրում: Այս հարցում կարևոր դեր է խաղում հայ խոջայական կապիտալը՝ Նոր Ջուղայից մինչև Վենետիկ ու Ամստերդամ: Նոր Ջուղան սերտորեն կապված էր Ս. Էջմիածնի հետ. տեղի հայությունը կրում էր Մայր Աթոռի և Հայոց հայրապետների ու հոգևորականության գաղափարական ազդեցությունը: Ս. Էջմիածին էր առավելապես ուղղորդում Նոր Ջուղայի հայ վաճառականության կրթամշակութային ձեռնարկումները, և Մայր Աթոռն ու Նոր Ջուղան, կարելի է ասել, հաղորդակից ամոթների մեծ կապված էին իրար ամենատարբեր հարցերում:

Գաղութահայության՝ հայ ազա-

տագրական պայքարին մասնակցության երրորդ ուղղությունն անուղղակիորեն էր դրսևորվում, սակայն թերևս ամենակարևոր էր՝ որպես ազատագրական պայքարի համար միջազգային ասպարեզում ճանապարհ հարթող: Այն դրսևորվում էր երկու եղանակով: Առաջինը՝ հայ ժողովրդի ազատագրական խնդիրները եվրոպական արքունիքներում ներկայացնելն էր, որն անգամ գործնական առկայություն չտալու դեպքում օգնում էր հայ ազատագրական պայքարի գործիչներին համապատասխան եզրահանգումներ կատարել: Պետք է փաստել, որ մինչև Իսթայել Օրու ռուսական կողմնորոշումը՝ 17-րդ դարի երկրորդ կեսին, հայ ազատագրական մի տեղ, բախվելով Արևմուտքի անգործությանը, տրված, սակայն չիրականացրած խոստումներին և այլևս չվստահելով, աստիճանաբար հակվել էր դեպի Ռուսաստան:

Երկրորդ ուղղությունը գաղութահայության գործուն մասնակցությունն էր հակաօսմանյան պայքարին լինել դիվանագիտական թե՛ զինական միջոցներով: Արևելքի ու արևելյան լեզուների իմացությամբ հայերը կարևոր դեր էին խաղում եվրոպական պետությունների՝ արևելյան երկրների հետ բանակցություններում: ➔ էջ 8

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոգևորականները. հիշողություններ պատերազմի դաշտից



Կարո սարկավագ Ղարիբյան, 2020 թ. 44-օրյա պատերազմի մասնակից

Պատերազմի ժամանակ լինում են պահեր, երբ ոչ պաշտպանական զենքերը և ոչ էլ ամրությունները չեն կարողանում իրենց խնդիրը կատարել, և այդ պահերին միակ հույսը մնում է աղոթքը, իսկ գնդերեցը դառնում է հավատի ու հույսի խորհրդանիշ: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ հրամանատարները խնդիր կատարելու համար մեքենայով տեղաշարժվելիս գնդերեցներին խնդրել են իրենց հետ գնալ՝ հավատալով, որ այդ պարագայում արկերն ու ամոթաշունչներն իրենց չեն վնասի:

2020 թ. հոկտեմբերյան մի օր առավոտից թշնամու ինքնաթիռներն անդադար ռմբակոծում էին մեր՝ Հաղորտի գործառնական պաշտպանական շրջանը և հրամանատարական կետը: Մեր ունեցած հակաօդային պաշտպանության միջոցներն ամօգուտ էին ռազմական ինքնաթիռների դեմ, իսկ Պաշտպանության բանակի 307 վարչությունը անգործությունից արդեն չէր պատասխանում մեր հրամանատարների զանգերին: Բոլորի միակ հույսը մնացել էր առ Աստված աղոթքը, նույնիսկ իրենց ոչ հավատացյալ համարող սպաներն էին խնդրում, որ աղոթենք՝ բարձրաձայն ուխտելով ողջ մնալու դեպքում մկրտվել: Հրաշքով թշնամու հարվածները լուրջ վնասներ չպատճառեցին, իսկ այն սպաներն ու զինվորները, որոնք մկրտված չէին, առաջին իսկ հնարավորության դեպքում շտապեցին մկրտվել:

2020 թ. հոկտեմբերի 27-ին մեր գործառնական, լիակատար շրջափակումից խուսափելու համար, ստիպված էր մոտ 35 կմ ոտքով նահանջել: Մեկ ամիս անդադար իրետակոծությունների տակ գտնված և ամեն օր թշնամու հարձակումները հետ մղած զինվորները նահանջելիս իրենց զենքերի հետ դիրքերի մատուցներից դուրս էին բերել բոլոր խաչերը, սրբապատկերներն ու ավետարանները՝ գիտակցելով, որ թշնամին, դիրք մտնելով, առաջինն այդ սրբություններն է պղծելու: Այս դրվագը լավագույնս է բնութագրում զինվորի հավատն ու նվիրումը Աստծու և Սուրբ Եկեղեցու հանդեպ:

Մի ուշագրավ դեպք էլ հիշում են պատերազմի վերջին օրերից՝ Շուշիի մատուցներում: Այդ ժամանակ հայտնի էր, որ թշնամու զինվորները մեր զինվորական



համազգեստն էին կրում, որպեսզի կարողանային մեր զորքին մոլորեցնել: Այդ օրը Շուշիի մոտ իրար դեմ են դուրս գալիս մեր և Դրմբոնի զորամասերի զինվորները, ու որպեսզի ապացուցեն, որ հայեր են, ցույց են տալիս իրենց խաչերը, որովհետև միակ բանը, որ այդ պահին կարող էր մեզ տարբերել ադրբեջանցիներից, մեր հավատի խորհրդանիշ խաչն էր:

Խաղաղ պայմաններում գնդերեցի անելիքը նույնպես հնարավոր չէ թերագնահատել, բայց բանական իրենց ծառայությունը բերողների լավագույն քննությունը պատերազմն է, որը գնդերեցներն անցել են պատվով:

Պատերազմի դաշտում գնդերեցի անելիքներն անսպառ են. մա բոլորի՝ թե՛ զինվորի, թե՛ հրամանատարի, թե՛ կամավորների օգնականն է, նրանց բոլորի հոգևոր սպասավորը: Գնդերեցը բոլորի համար օրինակ պետք է լինի, այն, ինչ խոսել ու քարոզել է խաղաղ ժամանակ գործառնական, պարտավոր է գործադրել պատերազմի դաշտում: Պատերազմի ժամանակ միայն հոգևոր խոսքն ու քարոզը բավարար չեն (հնարավոր է՝ դրա համար պահ էլ չգտնվի): Քարոզի լավագույն միջոցը դառնում է այդ քարոզը մարմնավորող գործը: Ամենամանջան բաներից, օրինակ՝ սնունդ և զինամթերք տեղափոխելուց սկսած մինչև զենքը ձեռքին զինվորի կողքին կանգնելն ու մարտնչելը, հրամանատարական կետերում վիրավորին վիրակապելուց սկսած մինչև վիրավոր ու զոհված զինվորներին կրակի գծից դուրս բերելն են դառնում գնդերեցի ամենօրյա առաքելության մի մասը: Անկախ իր հոգեվիճակից՝ գնդերեցը պարտավոր է իր օրինակով ոգևորել, ամիրածեշտության դեպքում հոգ տանել, մխիթարել, կարեկցել բոլորին: Ասված մեկ խոսքը կամ միասին կատարված աղոթքը կարող են մեծ մշակակություն ունենալ ամեն վայրկյան կենաց-մահու կռիվ տվող և բազմաթիվ զինակից ընկերների կորցրած զինվորների համար, էլ ուր մնաց իրենց հետ հավասար կողք կողքի հայրենիքի պաշտպանության համար մարտնչելը:

Գոռ սարկավագ Գյուրջյան, այժմ՝ Տ. Վաչագան քահանա, 2016 և 2020 թթ. պատերազմների մասնակից



Անկեղծ ասած, բանական հոգևոր ծառայության և պատերազմի մասին հիմա խոսելը լրացուցիչ կենտրոնացում ու տրամադրվածություն է պահանջում, որովհետև պետք է վերստին փորձենք իմ ներսում ամփոփված այն էջերը, որ հարուստ են ուրախություններով, դժվարություններով, կորստի ծանր ցավով, անորոշության ու հույսի հակասական զգացումներով: Չգիտեմ՝ ինչու, բայց ես ակամա այդ գիրքը փակ եմ պահում և հազվադեպ եմ գնում իմ հիշողությունների աշխարհ: Միգուցե Արցախի կորստից մնացած հոգեբանական վերքի դրսևորում է, որ պաշտպանում է ինձ լրացուցիչ ցավից, բայց երբեմն էլ հետադարձ հայացքը բանական իմ ծառայությանը և հատկապես պատերազմական օրերի հիշողությունները դառնում են ինձ համար ուժականության և կյանքի վերափոխարկման միջոց:

Ծառայությունս սկսվել է 2015 թվականից Արցախի Մատաղիսի գործառնական, որն ապահովում էր Արցախի հյուսիսարևելյան

առաջնագծի կարևոր, միևնույն ժամանակ վտանգավոր ուղղություններից մեկի պաշտպանությունը: Քանի որ Մատաղիսը գտնվում էր իմ ծննդավայր Մարտակերտից ընդամենը 20 կմ հեռավորության վրա, և ես մանուկ հասակից միշտ թաքուն ցանկություն էի ունեցել զինվորական դառնալու, ուստի բավականին ուրախությամբ մեկնեցի ծառայության:

Բանական ծառայող հոգևորականը փակ կառույցի սպասավոր է, և կան բավականին նրբություններ զինվորների ու սպաների հետ շփումների մեջ: Այս առումով բանական մի փոքր ծանր է հոգևորականի ծառայությունը, բան քաղաքացիական կյանքում: Չինվորները, սպաները դիմում էին տարբեր հարցերով, օրինակ՝ պատերազմի ժամանակ զենք



վերցնելը և մարդ սպանելը, որին հաճախ էի առնչվում ծառայության ընթացքում: Հարցնում էին՝ Աստծուն ընդունելի է արդյոք զենք վերցնելը, ես էլ փորձում էի Սուրբ Գրքի համաձայն իրենց օգնել, որպեսզի չմտածեն, որ հայրենիք պաշտպանելով կամ թշնամու դեմ կռվելով՝ մեղք են գործում: Որովհետև շատ են հիմա աղանդավորական կազմակերպություններ, որոնք ջանք չեն խնայում «Մի՛ սպանիր» պատվիրանը սխալ մեկնաբանելու գործում՝ նպատակ ունենալով մարդկանց հետ կանգնեցնել հայրենիքի պաշտպանության գործից: Բայց, փորձ Աստծո, կարողանում էի Սուրբ Գրքից մեջբերումներ անելով՝ ապացուցել, որ «Մի՛ սպանիր» պատվիրանից մի քանի տող ներքև ասվում է, որ այն մարդիկ, որոնք մարդասպան են, նրանց պետք է քաղաքից դուրս հանել և քարկոծելով սպանել: Չինվորներին բացատրում էի, որ տվյալ դեպքում իրենք բռնում են մարդասպանի ձեռքը և կասեցնում այն, ինչ նպատակ ունի թշնամին մեր ազգի հանդեպ գործելու:

Հրամանատարների հետ ծառայությունը ևս ուներ իր բարդությունները, մասնավորապես այն առումով, որ մենք՝ գնդերեցներս, հիմնականում տարիքով նրանցից փոքր էինք և միայն ժամանակի ընթացքում՝ մեզ ճանաչելուց, հարգելուց հետո էինք կարողանում նրանց վրա հոգևոր ազդեցություն ունենալ: Բարեբախտաբար, հրամանատարների մեծ մասը հավատքով մարդիկ էին, որոնք ամեն ինչ անում էին, որ հոգևոր ծառայությունը զորամասում հաջողվեր:

Ծառայությանս սկիզբը համընկավ այն շրջանի հետ, երբ Ադրբեջանն սկսել էր 1994 թ. զինադադարից ի վեր հրադադարի ամենամասշտաբային խախտումները, դիվերսիոն ներթափանցման փորձերը, որ ամբողջացան 2016 թ. ապրիլ 2-ին լայնածավալ հարձակումով: Ամենաթեժ ուղղություններ

րից էին հենց իմ գործառնական պաշտպանության ներքո գտնվող Թալիշի դիրքերը:

Ապրիլյան պատերազմը եղավ իմ կյանքի առաջին լուրջ փորձությունը: Մինչ այդ մեր գործառնական եղել էին դիրքային ծառայության ժամանակ թշնամու կրակոցներից զինվորների զոհվելու դեպքեր, և ես շատ ծանր էի տանում ամեն մի դեպք՝ ինքս ինձ մեղադրելով. «Ինչու՞ պիտի նրանք զոհվեն, վիրավորվեն, իսկ ես՝ ոչ...»: Բայց երբ սկսվեց Ապրիլյան պատերազմը, ամենուր տիրում էր մահվան սարսափը, և արդեն հստակ էր, որ ոչ մեկս էլ ապահովագրված չեմք զոհվելուց: Սրան զուգահեռ երբ տեսնում ես, որ կռվող զինվորը հույսը դրել է Աստծո ու Նրա սպասավոր գնդերեցի աղոթքի վրա, արդեն հասկանում ես, որ պատերազմում պետք չէ մտածել մեռնելու կամ չմեռնելու մասին, այլ դա թողնելով Աստծու կամքին՝ անել քեզանից կախվածը՝ զինվորների կողքին լինելու համար: Մի կարևոր հանգամանք ևս, որ օգնեց ինձ պատերազմի ընթացքում. ես՝ որպես հոգևորական, մեռակ չէի, իմ ընկերները՝ Տ. Վարագդատ քեն. Նաջարյանը և լուսահոգի Նարեկ սրկ. Պետրոսյանը, Երևանից անմիջապես ժամանել էին Արցախ և միացել մեզ:

Եթե Ապրիլյան պատերազմում հարազատ զինվորականների կորուստն սփոփվում էր մեր քաջերի հզոր դիմադրության իրողությամբ և թշնամու նպատակների ձախողմամբ, ապա այլ էր իրավիճակը 2020 թ. 44-օրյա պատերազմի ժամանակ: Չինուսի և ռազմատեխնիկայի անհամեմատ առավելությունն ունեցող թշնամին ամեն ինչ անում էր՝ Արցախն ամբողջությամբ գրավելու համար: Այդ ժամանակ ես Արցախի ՊԲ-ի ավագ գնդերեցն էի, և ավելի մեծ էին պատասխանատվությունն ու զիտակցումը, որ պետք է կատարել ուժերից վեր քայլեր: Փառք Աստծո, այս անգամ էլ ես մեռակ չէի. պատերազմի առաջին իսկ օրերին Արցախ եկան ներկայումս ՀՀ ՁՈՒ հոգևոր առաջնորդ Տ. Մովսես վրդ. Սարգսյանը, հայր Մկրտիչը, Նարեկ սարկավագը, Տ. Վարագդատը և շատ այլ հոգևորականներ, որ իրապես կարողացան Քրիստոսի անունով ու իրենց աղոթքով գոտեպնդել մեր զինվորներին:

Այո, մենք, ի վերջո, պարտվեցինք և կորցրինք Արցախի մեծ մասը, բայց ես չեմ կարող պարտության պատճառով մոռանալ այն հերոսական պայքարը, որ մղում էին հայ զինվորը, հայ կամավորը և հայ հոգևորականը: Առանց մտնելու ռազմաքաղաքական վերլուծությունների բալիդը՝ ես միայն կարող եմ վկայել, որ մեր բանակը իրապես անձնագրի ու աներևակայելի պայքար է մղել: ՊԲ գնդերեցները և նրանց օգնության եկած մեր Եկեղեցու հոգևորականները անմիջականորեն ներգրավված էին այդ հերոսական պայքարի մեջ: Ի թիվս բազմահազար մեր նահատակների՝ ունեցանք նաև զոհված, վիրավորված և անհայտ կորած հոգևորականներ, որոնք գիտակցաբար զնացին այդ ճանապարհով:

2020 թվականի հիշողություններն իմ մտքում դրոշմված են Նարեկ անվան ներքո, որովհետև լուսահոգի սարկավագը իմ վաղեմի մտերիմ ընկերն էր, եղբայրը, և պատերազմի մեծ մասն անցել ենք միասին: Իհարկե, բազմաթիվ անմոռանալի դրվագներ եղան պատերազմի ընթացքում, բայց կատարեմ միայն մեկը: Երբ Նարեկ սարկավագը Հաղորտի առաջնագծում էր, դիրքերի մոտակա լճված ֆերմայից սագեր էր բռնել, և որպեսզի թշնամին ծուխը չտեսնի, ընտրել էր միայն չոր փայտերը և մարմանդ կրակի վրա ամբողջ օրը խորովել: Այնքան ուրախությամբ էր պատմում Նարեկը այդ խորովածի պատմությունը, որ մինչև հիմա, երբ հիշում եմ, զգում եմ կենցաղային այդ փոքր թվացող արարքի միջից զինվորների հանդեպ ունեցած գնդերեցի անսահման սերը:

Ես փառք են տալիս Աստծուն, որ ութ տարի շարունակ հնարավորություն են ունեցել ծառայելու Հայոց բանակում, և մշտապես աղոթում եմ, որ Աստված անսասան պահի մեր բանակը ու մեր զինվորին:

Մերօրյա վարդանանք

«Որ զմահ ոչ գիտէ՝ երկնջի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ՝ ոչ երկն-ջի ի նմանէ»:

Եղիշէ

Ենք դարեր շարունակ սե-րունդ ենք կրթել Վարդանանց ոգով ու օրինակով, համաձայն ավետարանական ճշմարտության՝ հանձն ենք առել պայքարը հանուն հայրենիքի ու հավատքի։ Պատ-վում ենք մեր հավատի ու հայրենի-քի նահատակներին, որոնք ի գին իրենց արյան՝ փաստեցին, որ այս աշխարհի ուժը, հիրավի, տեղի է տալիս, երբ նրան հակադրվում է ոգու զորությունը, քանի որ առաջի-նը, որ ժամանակավոր է, ոչնչանում ու անեանում է, մինչդեռ երկրորդը հավիտենական է և անկորնչելի, որովհետև ծնունդ է աստվածային անմահ Յոգու։

Պատերազմը, որ մղվում է հա-նուն ազատության և արդարու-թյան, իսկապես, հավաստիքն է այդ ազգի բարձր հոգեկանության, ոգու ուժականության։ Արդարու-թյուն, որի համար մարտնչողներին Յիսուս երանի էր տալիս՝ ասելով. «Երանի՛ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»։

Այո՛, Յիսուս Իր հավատարիմ աշակերտներին խոստացավ, որ կլինեն քաջ, երջանիկ, բայց միշտ հալածված։ Քաջ ու երջանիկ լինելը յուրաքանչյուրիս ընտրությունն է,

իսկ հալածանքները հաղթահարե-լը և հավատքն ամուր պահելը մեր քաջության ու երջանկության բո-վանդակությունն են։ Տերն Իր իսկ օրինակով ամենքիս հրավիրեց քայլելու նեղ ճանապարհով։ Քրիս-տոսի օրինակին հետևեցին նաև մերօրյա նահատակ հերոսները։ Ու հայրենիքը, հավատքը, սրբություն-ները պաշտպանելու ճանապարհին նրանք հանդիպեցին Քրիստոսին ու մասնակից եղան Տիրոջ հաղթանա-կին։ Նրանք նահատակվեցին, որ մենք հաղթենք։ Բայց արդյո՞ք մենք արժանի էինք։ Այս հարցի պատաս-խանը միայն հնարավոր է գտնել, եթե պատասխանենք մեկ այլ հար-ցի. ես հայրենիք ունե՞մ, հավատք ունե՞մ, սրբություն ունե՞մ, եթե այո՛, ուզո՞ւմ եմ հաղթել։

451 թվականին Յայոց աշխարիը քաջությամբ ու նահատակությամբ պատասխանեց այդ հարցադրում-ներին՝ աստվածային սիրո հանդեպ երախտագիտությամբ ու նվիրու-մով բացականչելով. «Չպետք է երկնչենք մահկանացու մարդ-կանց սրից, այլ եթե հարկ է, մինչև իսկ քաջությամբ մեռնենք հանուն հավատքի, հանուն մեր ընտանիք-ների ու մեր զավակների, որպես-զի փրկվեն մեր հոգիները, և մենք քաջի անուն ժառանգենք մեր սե-րունդներին»։ Ղևոնդ երեցի այս քաջալերիչ խոսքերի հնչեղության ներքո դեռևս 5-րդ դարում հայոց զորքի ճամբարում մկրտության համար նախատեսված ավազան

պատրաստվեց, և հաղորդության սուրբ սեղան կանգնեցվեց, ապա բոլոր չմկրտվածներին մկրտեցին ու հաղորդ դարձրին Աստծու Որ-դու մարմնին և արյանը, որից հետո սկսվեց Ավարայրը... Սկսվեց, բայց մինչև օրս էլ դեռ չավարտվեց, այլ շարունակվում է...

5-րդ դարից մինչ օրս էլ մենք ապրում ենք փորձություններով լե-ցուն մի աշխարհում։ Պատերազմի մասին խոսում ենք սարսափով, բո-ղոքում և ընդդիմանում ենք, բայց շարունակում ենք հանդուրժել անարդարություններն ու չարիքը։ Սակայն երբեք ու երբեք չի կարե-լի մոռանալ, որ քրիստոնյան չի կարող հանդուրժող լինել չարիքի նկատմամբ, քրիստոնյան չի կարող պարտվել չարին։ Ուստի և ամենա-կարևոր հարցը, որին պիտի պա-տասխանենք ամենքս, այս է՝ որ-տե՞ղ է մեր հաղթանակը։

Դարերով փայփայված այդ հաղ-թանակն Ավարայրի դաշտում է, Եռաբլուրում, առաջնագծում, հայ-րենիքը և Եկեղեցին սիրող սրտե-րում։ Միայն հաղթանակն է պայմա-նը՝ արժանի լինելու մեր զինվորների նահատակությանը և Վարդանանց սրբերի բարեխոսությանը։ Ընտրու-թյունը մերն է...

Սուրբ Վարդանանք և նորօրյա վարդանանք ընտրեցին Աստծուն և հայրենիքը՝ անկախ դիրքից և կոչումից՝ իրենց կյանքը, կարո-ղությունն ու ուժը նվիրաբերելով Աստծուն և հայրենիքին ու հավա-

տարիմ մնալով Աստծու և հայրե-նիքի հետ կապած իրենց սրբազան ուխտին։ Մեր հայրենիքի համար ամենածանր ժամանակաշրջանում գտնվեցին մարդիկ, որոնք քաջու-թյուն ունեցան հայրենիքը սիրելու իրենց կյանքից առավել և կյանքի գնով, հետևելու Քրիստոսին մին-չև վերջ՝ ունկնդիր լինելով Փրկչի քաջագուն ծառա Սուրբ Վարդան Մամիկոնյանի կոչին. «Չերկնչենք և չվախենանք հեթանոսների բազ-մությունից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունք-ներս դարձնենք. որպեսզի եթե Տե-րը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտու-թյան կողմը, իսկ եթե հասել է ժա-մանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»։

Մեր ժամանակներում նույնպես ավարայրներ են տեղի ունենում, ներկայումս էլ հայոց քաջարի վար-դանները նահատակվում, բայց և այդ մահով հավիտենապես ապ-րում են հայոց երկնակամարում՝ Աստծու գրկին փարված։ Եվ այսօր առավել, քան երբևէ, հարկավոր է, որ մենք զնահատենք մեր նահա-տակների սխրամքն ու ապրենք հանուն մեզ զոհված քաջարի զին-վորների։

Այսօրվա ավարայրը չի ավարտ-վել։ Սեր ավարայրը դեռ առ-

ջևում է։ Այսօր ևս մեր ականջնե-րում հնչում են երջանկահիշատակ Գևորգ Կաթողիկոսի խոսքերը. «Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժո-ղովրդի ոգուն։ Ես գիտեմ նրա ան-ցած ճանապարհի դառնություննե-րը։ Ես համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խոսքը։ Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթական»։

Ահա այս ոգու կրողն էին մեր քա-ջարի զինվորները և մեր զնդերեց նահատակ եղբայրները։ Մեր նորօ-րյա նահատակները, Վարդանանց սրբերի շարքին դասվելով, արդեն երկնքից են պաշտպանում ու քա-ջալերում մեզ անկոտրում լինելու, պայքարելու և կերտելու նորանոր հաղթանակներ։ Եվ քաջ հոգևորա-կանը, իմաստուն մտավորականը, առյուծասիրտ զինվորը, ջանասեր աշակերտը, աշխատասեր գյուղա-ցին մեկ դարձած պետք է գործեն ի շահ հայրենիքի։

Ինչպես ոսկեդարյան Ավարա-յրում, այդպես էլ այժմ մեր Յայոց բանակի սխրագործ զինվորնե-րը և մենք՝ ամենքս, ներկա դարի ավարայրում առավել, քան երբևէ, պարտավոր ենք ձայնակից լինել քաղցրաբարբառ Եղիշեին՝ բացա-կանչելով. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակ-ները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ այլ դառն հարված»։

ԱճՆԱ ՀՈԿՍԵՓՅԱՆ

ՆՈՐՈՐՅԱ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐ



Քսանմեկ ձայն առ Աստված

Չայն 1

Տէր իմ,
Ամեն առավոտ, երբ աչքերս բացեմ,
Առաջին գիտակցված միտքս
Թող Քեզ փառաբանելն ու գոհություն
հայտնելը լինի,
Առաջին խոսքս, որ արտաբերեմ,
Թող Քո Սուրբ Որդու անունը լինի,
Լսելիքիս մեջ ամեն առավոտ թող մի
հոգևոր մեղեդի հնչի,
Ու թող մարմինս փշաքաղվի
«Ես սիրում եմ Քեզ, Տէր իմ» խոսքերովս։
Աստված իմ,
Ամեն առավոտ իմ առաջին գիտակցված
սրտի թրթիռը

Թող Քո աստվածային տիրույթին հասնի,
Ու թող ամեն անգամ զարթնելիս
Հոգիս ցնծա Սուրբ Հոգուդ ներկայությունից։
Օրհնիր կյանքիս այս օրը ևս
Աստվածային Քո ողորմությամբ
Ու հեռու պահիր ամեն չարիքից։
Փառք Քեզ հավիտյանս։ Ամեն։

Չայն 2

Աստված իմ, աղաչում եմ Քեզ,
Լցրու այսօրվա պահը բարեգործության
առիթմներով,
Որ բարին գործելով՝
Ազատվեմ մեղքերիս բեռից ահավոր։
Արձակիր մեղքերս Որդուդ և Սուրբ Հոգուդ
անունով,
Եվ թող կատարվեն առաքյալիդ այս
խոսքերը.
«Ինչ բարիք որ գործում ես,
Թող բարեգործություն համարվի
Եվ քեզ հանդերձյալ կյանքի փառքին
արժանացնի»։
Փառք Քեզ հավիտյանս հավիտեմից։ Ամեն։

Չայն 3

Ամենակարոր Տեր, Աստված իմ,
Քո Սուրբ զորությամբ
Վանիր ինձանից ամեն նեմզ մտածում ու
արարք,
Արամատախիլ արա սրտիցս չար
նախանձն ու ատելությունը
Եվ լցրու այն բարությանբ ու
կամեցողությամբ,

Որպեսզի այնտեղ Քո աստվածային սերը
բնակվի։
Փառք Քեզ հավիտյանս հավիտեմից։ Ամեն։

Չայն 4

Տէր Աստված իմ, Արարիչ երկնի ու երկրի,
Դու, որ օժտված ես ներելու անսահման
կարողությամբ,
Ներիր ինձ՝ բազմամեղիս, ու ինձ էլ
սովորեցրու ներել։
Օգնի՛ր, որ կարողանամ ներել ինքս ինձ ու
Իմ դեմ բոլոր չարիք գործողներին։
Օրհնյալ ես Դու հավիտյանս հավիտեմից։
Ամեն։

Չայն 5

Տէր իմ և Աստված իմ,
Այսօր և հավիտյան
Հեռացրու ինձանից ամեն բարկության
առիթ,
Եվ թող ինքս էլ բարկության պատճառ
չդառնամ
Որևէ մեկի համար։
Կորզիր ինձանից
Չայրույթի ու կատաղության բոլոր
դրսևորումները
Եվ լցրու հոգիս Քո հանգստությամբ ու
խաղաղությամբ։
Փառք Քեզ հավիտյանս հավիտեմից, Ամեն

Չայն 6

Տէր իմ,
Պարզեցրու միտքս, մաքրիր ամեն տեսակի
Ցանկասիրական և փառամոլական
մտորումներից,
Որպեսզի դրանք չկարողանան
կենտրոնանալ
Աշխարհիկ հոգսերի վրա։
Ուղղիր միտքս՝ բարին խորհելու,
ճշմարիտ ճանապարհով ընթանալու
Եվ Քեզ փառաբանելու։
Օրհնյալ ես Դու հավիտյանս հավիտեմից,
Ամեն։

Չայն 7

Աստված իմ,
Թույլ տուր ինձ հիանալ բնության
հրաշքներով,

Որ արտացոլումն են Քո արարածի։
Տու՛ր ինձ զմայլվել արևածագով
չքնաղազույն,
Որ պարզևում ես աշխարհին ամեն օր։
Արեգակի շողերը թող լուսավորեն միտքս՝
Վանելով ինձնից չար երևույթների
մտածումներս սին,
Ու թող իմ բոլոր խոհերը լինեն ջինջ երկնքի
պես պարզ ու լուսավոր։
Փառք Քեզ հավիտյանս հավիտեմից։ Ամեն։

Չայն 8

Տէր Աստված իմ, աղաչում եմ Քեզ,
Սովորեցրու ինձ ոչ թե լոկ բառերով Քեզ
աղոթել,
Այլ սրտի պարզությամբ և հոգու
շնորհներով։
Զգաստացրու միտքս աղոթքի ժամին,
Տրիր խավարում թափառող խոհերս
ուճայն,
Որ չարից եմ ծնված։
Սաստիր թշնամուն, որ այլևս
Չմոտենա ինձ աղոթքի պահին,
Որ միակամ դարձած սրտով, մտքով
և հոգով՝
Մշտապես լինեմ Էությանդ հետ։
Օրհնյալ ես Դու հավիտյանս հավիտեմից։
Ամեն։

Չայն 9

Աստված իմ,
Թույլ չտաս, որ հպարտությունն ու
մեծամտությունը
Համակեն մարմինս ու հոգիս,
Սիրտս լցրու հեզությամբ ու պարզությամբ,
Խոնարհեցրու հոգուս գլուխը՝
Ծնկաչոք Քեզ աղոթելու և երկրպագելու։
Օրհնյալ ես Դու հավիտյանս հավիտեմից։
Ամեն։

Չայն 10

Տէր իմ,
Հեռու պահիր ինձ նեմզ թշնամու չար
նկրտումներից,
Մի հսկա անդունդ դի՛ր նրա առաջ,
Որ չկարողանա մոտենալ ինձ
Իր կեղծավորությամբ ու
գայթակղություններով։
Թող որ զորանամ Քո սուրբ խաչով՝

Դիմակայելու օրվա փորձություններին։
Փառք Քեզ հավիտյանս հավիտեմից։ Ամեն։

Չայն 11

Տէր իմ,
Հանգստացրու տազնապած սիրտն իմ,
Հեռացրու ինձանից լարվածությունն ու
Ապագայի հանդեպ անորոշությունը,
Վաղվա օրվա համար հոգս անելն ու
խռովքը։
Եվ լցրու ինձ հոգու հանդարտությամբ ու
խոնարհությամբ,
Որ կարողանամ մշտապես հաղորդակից
լինել
Անպարփակ լռությանդ ու խաղաղությանդ։
Փառք Քեզ հավիտյանս հավիտեմից։ Ամեն։

Չայն 12

Աստված իմ, աղաչում եմ Քեզ,
Հանդերձիր ինձ հավատի պատմուճանով,
Վերացրու իմ սրտից
Անհուսությունն ու կասկածամտությունը,
Որ չարի ծուղակներն են։
Օգնի՛ր, որ անսասան մնամ և չկորցնեմ
հավատս
Նույնիսկ ծայրահեղ ու անհուսալի
իրավիճակներում։
Փառք Քեզ հավիտյանս հավիտեմից։ Ամեն։

Չայն 13

Տէր իմ և Աստված իմ,
Պաշտպանիր ինձ ամեն տեսակի
փորձություններից,
Ուժ տուր դիմակայելու կյանքի
Բոլոր դժվարություններին,
Թեպետ Դու երբեք ոչ ոքի չես տալիս
այնպիսի նեղություններ,
Որոնք անհնար է հաղթահարել։
Եվ դժվարին իրավիճակները նրա
համար են,
Որ չհեռանանք Քեզանից,
Մշտապես արթուն լինենք և անդադար
աղոթենք
Մեր փրկության համար։
Փառք Քեզ հավիտյանս հավիտեմից։ Ամեն։

Շարունակելի

Աճի Նազարյան

Հայոց Եկեղեցու դերը 16–17-րդ դարերի հայ ազատագրական պայքարի նախապատրաստման գործում

← 32

Նրանք ամեն կերպ աջակցում էին հակասամայան ընդհանուր եվրոպական ճակատ ստեղծելուն: Բնորոշ օրինակներից է Մոլդովայի և Ռումինիայի հայույթյան մասնակցությունը տեղի ազգաբնակչությանը՝ փութակված զորքերի դեմ մղվող պայքարին:


Ուխտագնացությունները: Ազատագրական պայքարի մաս կազմող և դրան նպաստող գործունեության իրեն ուխտագնացությունները, որոնք երկրի ներսում կազմակերպվում էին դեպի համահայկական, իսկ հայրենիքից դուրս՝ դեպի Երուսաղեմի տնօրինական սրբատեղիներ, մաս Եվրոպայի՝ հատկապես Յոննի համալսարանում և Եվրոպայի համալսարանում:

Հայաստանի ներսում կազմակերպվող ուխտագնացությունները որոշակիորեն նպաստում էին ազատասիրական գաղափարների տարածմանը: Համահայկական ընդգրկում ունեին մախ՝ դեպի Ս. Էջմիածին, ապա՝ Մշո Ս. Կառապետ կատարվող ուխտագնացությունները: Ուխտագնացությունների միջոցով հարթվում էին հայկական տարբեր գաղթօջախներում և հայրենիքում ապրող հայերի միջև առկա կրոնական, մշակութային և ընկերային-տնտեսական խնդիրները, խոչընդոտներն ու արգելքները՝ առավել միավորելով ու համախմբելով ողջ հայությանը հայրենիքի ազատագրության գաղափարի շուրջ: Սփռված հայության փոխադարձ շփումների շնորհիվ էր մաս, որ պետք է հղանար Սիածմաէջ Մայր տաճարը մահմեդականներից ազատագրելու գաղափարը:


Ուխտագնացությունները մաս
հնարավորություն էին ընձեռում
առանց որևէ կասկած հարուցելու
վայրից վայր տեղաշարժվել և ազա-
տագրական ծրագրեր քննարկել:
Այսպես՝ եթե որևէ այլ դեպքում Ռոմ
մեկնելը կասկածելի կարող էր թվա-
լ և ընկալվել քաղաքական բանակ-
ցությունների նպատակ հետապն-
դող, ապա ուխտագնացության
մեկնելը որոշակիորեն համոզիչ
փաստարկ էր: Բնորոշ օրինակը
Ստեփանոս Ե Սալմաստեցի կա-
թողիկոսի ուխտագնացությունն էր
Ռոմի՝ համաքրիստոնեական
սրբավայրեր:

Հայկական տպագրությունը և հայ ազատագրական շարժումը: Պատմագիտության մեջ 16-րդ դարում հայ ժողովրդի համար բխատորոշ են համարվում երեք կարևոր իրադարձություն, որոնք ներկայանում են որպես ազգային զարթոնքի և հայ ազատագրական պայքարի մախաղուռ: Խոսքը վերաբերում է մեղապարտյան հրատապակություններին և 1547, 1562 թթ. խորհուրդաժողովներին:

Ստեփանոս Ե Սալմաստեցու գումարած վերոհիշյալ խորհրդաժողովից և Հռոմ ուխտագնացությունից հետո նրա հաջորդը՝ Միքայել Ա Սեբաստացին, 1562 թ. գումարում և Մեբաստիայի նշանավոր ժողովը, որի ժամանակ որոշվում և Հռոմ ուղարկելը Աբգար դպիր Թիսաթեցուն։ Անհրաժեշտ է նշել, որ 16-րդ դարի բոլոր հայ տպագրիչները գործել են Հռոմում և Վենետիկում, ինչը չի բացատրվում միայն Իտալիայի՝ որպես եվրոպայի գրատպության ու մշակույթի կենտրոն հիմնով կամ հայ վաճառականների՝ Իտալիայի հետ ունեցած սերտ հարաբերություններով։ Ինչպես ուխ-



Մշո Ս. Կարապետ վանքը




Ստեփանոս Ե Սալմաստեզի

տաճանադրությունները, այնպես էլ տպագրական գործունեությունը որոշակիորեն շղարշ են ծառայել Հռոմի հետ Հայաստանի ազատագրության ծրագրերը քննարկելու համար: Դժվար է ասել՝ Ազգարդյալիը Վենետիկում տպագրական գործունեություն կծավալել, եթե որոշակի հիշխանություններիմ հայտնի դառնար նրա Հռոմ գնալու բուն նպատակը, և նա Վենետիկում «Սաղմոսարան»-ի հրատարակությամբ չփորձեր արդարանալ, թե այնտեղ է գնացել տպագրական փորձ ձեռք բերելու և այն հետագայում Կ. Պոլսում կիրառելու նպատակով (ուր և փոխադրում է տպարանը և շարունակում իր գործունեությունը):

Նույնը վերաբերում է Աբգար դպիրի որդուն՝ տպագրիչ Սուլթանշահին, որը Հռոմում հրատարակչական իր գործունեությանը զուգահեռ՝ Հայաստանի ազատագրության համար դիմում է Պապին և այդ նպատակով փորձում է Հռոմում համախմբել Հայոց եկեղեցի նվիրապետական աթոռների գահակալներին։ Նա զորակցում է հայկական տպագրության մեկ այլ ներկայացուցիչ՝ Հովհաննես Տերզյանցուն հետ, որը, 1579 թ. Հռոմում հրատարակելով «Տօմար Գրիգորեան» գիրքը, 1583 թ. նամակ է գրում Երուսաղեմի հայոց պատրիարքին՝ Հռոմ գալու և Պապի հետ միասին Հայաստանի ազատագրության հարցը քննարկելու։

1583 թ. Սուլբանշահը նամակ է գրում Ս. Էջմիածնի գահակալ Թադեոս կաթողիկոսին: Նույն թվականին Սուլբանշահի՝ Ս. Էջմիածնի կաթողիկոսին և Հովհաննես Տերզմցուն՝ Երուսաղեմի պատրիարքին գրած համապետյոթ նամակները վկայում են, որ նրանք, տպագրական գործունեությամբ զուգահեռ, ծրագրել էին ստեղծել Հայաստանի ազատագրության՝ Հայոց Եկեղեցու միջոցառական աթոռների գահակալների միասնական ճակատ:

Հայկական տպագրություն
նաև որպես մտավոր զենք է ծա-
ռայում հայ ազատագրական պայ-
քարին: Այն 17-րդ դարում առա-
վել ընդգծված է արտահայտվում
Ամստերդամի հայկական տպա-



Միքայել և Սեբաստագի

րանի հրատարակություններում: Ոսկան վարդապետ Երևանցին 1668 թ. հրատարակում է «Աշխարհացոյց»-ը, որը Հայոց աշխարհի ճանաչելու կարևոր միջոց էր այդ ժամանակ: 1669 թ. տպագրվում է Առաքել Դավթիսեցու «Պատմութիւն»-ը: Հայ դասական պատմագրությունը եզրափակող այս երկում անմիջականորեն արձարծվում էին ժամանակի հայ կյանքի հուզող հարցերը: Կանանդեցիները չլքեցին 1665 թ., առաջին անգամ տպագրվում է Սովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը: Հայերեն գիրքն ընդհանրապես և Աստվածաշունչը մասնավորապես հայ իրականության մեջ ընկալվում էին որպես ազգային պետության չգոյության պարագայում ինքնությունը պահելու բազառիկ միջոցներ:

Պետք է ընդգծել նաև, որ հայկական տպագրությունը հատկապես 17-րդ դարում թույլ է տալիս նաև հետևել Հայաստանի ազատագրությանն առնչվող քաղաքական կողմնորոշման անցումներին, ազատագրական լեզուի ավանդական մեկնաբանություններին՝ ավարտին՝ նոր ձևափոխումներին:

Ազատագրական պայքարի հոգևոր-գաղափարական նախապատրաստությունը:

Ազգային-քաղաքական հարցադրումներով հայ ազատագրական պայքարին էր ծառայում նաև հոգևոր գրականությունը՝ ընդսմին արտահայտելով Վաղարշապատի Կաթողիկեի՝ որպես Մայր եկեղեցու և ըստ այդմ՝ հայ ժողովրդի հոգևոր ու ազգամակալք կենտրոնի գաղափարը։ Վաղարշապատի Ս. Կաթողիկեն գրական ստեղծագործություններում և աստվածաբանական երկերում հաճախ պատկերվում է որպես այրի։ Այսպես՝ Ս. Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմում Եդեսիան դիմում է Ս. Կաթողիկեին՝ որպես այրիի, իսկ Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց Ս. Կաթողիկեին» ստեղծագործության մեջ Մայր տաճարը՝ իբրև միայնակ մնացած սգավոր մայր, միախմբման կոչով դիմում է աշխարհասփյուռ իր զավակներին։ Ազատագրական պայքարի գիտակցության բարձրագույն

միտված հոգևոր ստեղծագործությաններ են գրում նաև Առաքել Բաղիշեցին, Գրիգոր Տաթևացին, Սիմեոն Ա երևանցին և ուրիշներ:

Հայրապետական աթոռի՝ Ս. Էջ-
միածնուն վերահաստատովելը
(1441 թ.):

Հայրապետական աթոռը Սսից Վաղարշապատ տեղափոխելը, բացի հոգևոր հիմնավորումներից, ուներ նաև քաղաքական կարևորագույն նշանակություններ: Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում իրապես համախմբեց հայությանը: Առանձնահատուկ հարաբերություններ ձևավորվեցին նվիրապետական մյուս աթոռների՝ Գանձասարի, Աղթամարի, Սսի կաթողիկոսությունների, ինչպես նաև երուսաղեմի ու Կ. Պոլսի հայ պատրիարքությունների հետ: Հայրապետական աթոռի՝ Ս. Էջմիածնում գտնվելը համախմբում էր նաև այդ դարաշրջանում հայ հասարակության մեջ իրենց ազդեցությունը դեռևս պահպանող իշխանական ու մեթոքական տների ներկայացուցիչներին: Դրանով են պայմանավորված Ս. Էջմիածնում Հայոց կաթողիկոսների գլխավորությամբ զաղտնի ժողովներ կրավիրելը և բանագնացություններ իրականացնելը: Դեռեք է նշել նաև, որ օտարները, այդ թվում՝ թուրք-պարսկական իշխանությունները, Արևմուտքի ու Արևելքի կրոնապետերն ու միապետերը, Ս. Էջմիածինը ընկալում և ընդունում էին իբրև հայ ժողովրդի հոգևոր-քաղաքական կենտրոն, և Հայոց հայրապետին՝ որպես ազգի առաջնորդի:

Հայրապետական աթոռի՝ Միածնաէջ իր սրբավայրում 1441 թվականին վերահաստատվելուց հետո Ս. Էջմիածինը դառնում ազատագրական խմորվող գաղափարների, ապա և սկսված շարժումների ու պայքարի կենտրոն։ Ս. Էջմիածինը կարողացան է հաղթահարել վերահաս բոլոր փորձությունները և դառնալ 16–17-րդ դարերի հայ ստավոր շարժման ու վերածնության ջահակիրը՝ չնայած քաղաքական անբարենպաստ պայմաններին, թուրք-պարսկական պատերազմին, շահ Աբասի բռնագաղթին և ջալալիների արշավանքներին։ Հայ Եկեղեցին իր ազդեցության դիրշուն է թողնում ժամանակի գրականության և ծավալվող տպագրության վրա։

ԿՐԹՈՒՅՈՒՆ և գԻՏՈՒԵՅՈՒՆ:
16–17-րդ դարերում հայ ազատագրական պայքարի կազմակերպման համար կարևոր էր նաև գիտակրթական ոլորտների համակարգային զարգացումը, ընդ որում՝ նաև այնպիսի գիտելիքի տարածումը, որն ուղղակիորեն նպաստում էր զինվելուն՝ ծառայելով ազատագրական պայքարին: Բնորոշ օրինակ է Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների կազմած «Բնաբանութիւն իմաստասիրական» աշխատության մեջ վառողի պատրաստման գիտությունը՝ ըստ երեք զինատեսակների՝ ծանր հրետանի, թեթև հրետանի և հրազան:

Նկատելի է, որ ազատագրական գաղափարներով տոգորված էին հատկապես տվյալ ժամանակաշրջանի հայկյրի մտավորականները: Այսպես՝ Մաղաքիա արք. Օրմանյանը 16-րդ դարի հայ ազատագրական պայքարի նվիրյալ Ստեփանոս Ե Սալմաստեցի կաթողիկոսին ներկայացնում է որպես «*լրթուած և ուսումնական անձ մը*», որն իր գործունեությամբ նպաստակալորված էր նշ միայն հայրապետական

աթուղի դիրքը բարձրացնել, այլ նաև «գարգազման սկզբնաւորութիւններ անել»։ Ստեփանոս Ե Սալմաստեցու հովվապետութեան տարիներին եկեղեցականաց դասից ոմանք նույնիսկ կոչվեցին «վարդապետաց վարդապատ»։ 16-րդ դարի կեսերին հայ նշանավոր հոգևորականները գարթոնքի շրջան նշանավորեցին, ինչը, անշուշտ, պայմանավորված էր առաջին հերթին կրթական հաստատութիւնների և դրանց շնորհաշատ սամեթի արդունավոր գործունեությամբ։ Այդ գիտակրթական շարժումը մեծ նպաստ բերեց հայ ազատագրական պայքարին՝ հայրենիքի ազատագրութեան գաղափարակիր գործիչների և ժողովրդական զանգվածների քանակը մեծացնելով։ Այս իմաստով աշխարհագրորեն առանձնահատուկ դեր ուներ Սյունիքը, որն ընկալվել է որպէս հայ դպրութեան պահապան։ Ի թիվս այդ դարաշրջաններուն գործող դպրութեան կենտրոնների՝ առանձնահատուկ կարևորություն ուներ Յարանց Մեծ ամապատը, որը թուրք-պարսկական պատերազմին զուգորդվող բռնագաղթի, համատարած սովի, արտագաղթի, տնտեսական և մշակութային անկայլ վիճակի պայմաններուն օրհասական վիճակից դուրս գալու համար դարձավ հայկական վերանորոգութեան նշանավոր ազդակներից։ Գիտակրթական գործունեությամբ խնդրո առարկա դարաշրջաններուն մեծ հռչակ էին վայելուն նաև Բաղէշի, Էջմիածնի և Ջուղայի դպրոցները։

Ամփոփելով 16–17-րդ դարերի հայ ազգային ազատագրական պայքարին նպաստող հանգամանքները՝ կարող ենք արձանագրել, որ 16-րդ դարում թե՛ հայրենիքում և թե՛ գաղթօջախներում հայության շրջանում հասունացել էր Հայաստանն օտար բռնատիրությունից ազատագրելու համար գործելու պահը: Այդ գիտակցումն ունեին 16–17-րդ դարերի Հայ եկեղեցու ներկայացուցիչները, որոնք, ի դեմս Ամենայն Հայոց Կաթողիկոսների, գործադրում էին մեծ ջանքեր՝ հրավիրելով գաղտնի խորհրդածրվմներ, կազմելով և առաջնորդելով բանազմաց խմբեր, ստեղծելով ուղիղ և միջնորդավորված կապեր և հարաբերություններ Հայաստանի ազատագրության խնդրով շահագրգիռ օտար ուժերի հետ:

S. Արարատ քհն. ՊՈՂՈՍՅԱՆ

**ՔՐԻՍՏՈՆՅԱ
ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային,
լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մալուկ Աթուր Ասլուր Էօմհաճին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Նաոհնե Յովհաննիսյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբայտորութեան հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջնիածին
ՅԵՐԱԿԵՐԱՆ՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ gristonvahavastan1@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/

kristonya-hayastan
Ստոր. տպագր. 16.10.2024 թ

Տպաքանակը՝ 1265